



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 26 >> հունիսի 2017թ.

N 47

ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման 1 հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2017 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

Կ ար գ ա դ ր ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանին տրամադրել 2017-2018 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2017 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 8-ը ներառյալ՝ 24 աշխատանքային (20 նվազագույն, 4 լրացուցիչ) օր տևողությամբ:
2. Դավիթ Դավթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում քարտուղարության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Մարիամ Առուշանյանին:
3. Դավիթ Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի օգոստոսի 9-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԴԱՀՐԱՄԱՆՅԱՆ